

<https://doi.org/10.46991/hc.2024.21.2.136>

The Armenian-Russian Military-Political Cooperation System and the 102 nd Military Base of Russia

Alen Ghevondyan

<https://orcid.org/0000-0002-0958-1548>

YSU Faculty of International Relations, Chair of Political Science, Associate Professor

a.ghevodnyan@ysu.am

Keywords: 102-th military base, Armenian-Russian relations, strategic partnership, South Caucasus, military-political cooperation, military equipment, balance of power, military-technical cooperation.

Armenian-Russian strategic cooperative relations have traditionally been, and continue to be, one of the most important components of geopolitical processes in the South Caucasus. These relations have historically reflected the interests and approaches of both states during the early period of independence and throughout subsequent geopolitical developments in the region.

This article examines the nature of cooperation with the Russian Federation in ensuring the security of the Republic of Armenia (RA) and its various formats. Special attention is given to the different aspects of military-political interactions between the two countries. The article discusses areas such as political and legal treaties, military-technical cooperation, and defense policy planning within the framework of Armenian-Russian strategic cooperation and alliance relations. The concept of "strategic cooperation" is analyzed from a conceptual standpoint, as it has traditionally been used to define the relationship between the Republic of Armenia and the Russian Federation.

A separate discussion is dedicated to the structural and functional characteristics of the Russian Federation's 102nd military base, where the analysis concludes that it functions as a joint unit equipped with military hardware and personnel capable of addressing a variety of military tasks. The article also presents the view that tensions in cooperative relations between superpowers and smaller states often arise due to differing perceptions of interests. These differences, rooted in the varying scales of resources and geopolitical realities, lead to divergent approaches to shared concerns in evolving geopolitical contexts.

Հայ-ռուսական ռազմաքաղաքական գործակցության համակարգը եվ ՌԴ 102-րդ ռազմաբազան

Ալեն Ղևոնդյան

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 136-150.



Received: 20.09.2024

Revised: 06.10.2024

Accepted: 19.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, քաղաքագիտության ամբիոն, դոցենտ

Հիմնաբառեր՝ 102-րդ ռազմաբազա, հայ-ռուսական հարաբերություններ, ռազմավարական գործընկերություն, Հարավային Կովկաս, ռազմաքաղաքական համագործակցություն, զինտեխնիկա, ուժային հավասարակշռություն, ռազմատեխնիկական գործակցություն:

Հայ-ռուսական ռազմավարական գործակցային հարաբերությունները ավանդաբար եղել ու մնում են Հվ. Կովկասի աշխարհաքաղաքական գործընթացների կարևորագույն բաղադրիչներից մեկը: Դրանք ավանդաբար արտացոլել են երկու պետությունների շահերն ու մոտեցումները անկախության վաղ շրջանում, ինչպես նաև տարածաշրջանի հետագա աշխարհաքաղաքական գործընթացներում:

Հոդվածում դիտարկվում են ՀՀ անվտանգության ապահովման գործընթացում ՌԴ-ի հետ համագործակցության ուղին ու դրա ձևաչափերը: Հատուկ ուշադրություն է դարձվում երկու երկրների ռազմաքաղաքական շփումների տարբեր կողմերին, քննարկվում են հայ-ռուսական ռազմավարական գործակցության ու դաշնակցային հարաբերությունների քաղաքական, իրավապայմանագրային, ռազմատեխնիկական ու պաշտպանական քաղաքականության պլանավորման ոլորտները:

Տեսահայեցակարգային դիրքերից ներկայացվում ու մեկնաբանվում է «ռազմավարական գործակցություն» հասկացությունը, որը ՀՀ-ՌԴ հարաբերությունների բնորոշման ավանդական նրակումն է:

Հոդվածում առանձին քննարկման ու վերլուծության առարկա է դառնում ՌԴ 102-ի ռազմաբազային կառուցվածքային ու գործառական բնութագիրը, որից եզրակացվում է, որ այն համաբանակային ստորաբաժանում է, որտեղ առկա են ռազմատեխնիկական ամենատարբեր խնդիրներ լուծող զինտեխնիկա ու ստորաբաժանումներ:

Կարծիք է հայտնվում, որ, մի կողմից, գերտերության, մյուս կողմից՝ փոքր ռեսուրսներ ունեցող պետությունների գործակցային հարաբերություններում խնդիրների ծագումը պայմանավորված է այդ երկրների շահերի ու հետաքրքրությունների՝ միմյանցից տարբերվող մասշտաբով ու ռեսուրսներով, աշխարհաքաղաքական նոր իրավիճակներում շահերի տարբերվող ընկալումներով:

Армяно-российская система военно-политического сотрудничества и 102-я военная база РФ

Ален Гевондян

Факультет международных отношений ЕГУ, кафедра политологии, доцент

Ключевые слова: 102-я военная база, армяно-российские отношения, стратегическое партнерство,

The Armenian-Russian Military-Political Cooperation System and the 102 nd Military Base of Russia
Հայ-ռուսական ռազմաքաղաքական գործակցության համակարգը եւ ՌԴ 102-րդ ռազմաքաղաքական

Южный Кавказ, военно-политическое сотрудничество, военная техника, баланс сил, военно-техническое сотрудничество.

Армяно-российские стратегические отношения всегда были и остаются одной из важнейших составляющих геополитических процессов на Южном Кавказе. Они традиционно отражали интересы и подходы двух государств в ранний период независимости, а также в последующих геополитических процессах региона.

В статье рассматриваются пути и форматы сотрудничества с РФ в процессе обеспечения безопасности Армении. Особое внимание уделено различным аспектам военно-политических контактов двух стран, обсуждаются области политического, договорно-правового, военно-технического и оборонного планирования армяно-российского стратегического сотрудничества и союзнических отношений.

В статье понятие «стратегическое сотрудничество» представлено и интерпретировано с концептуальной точки зрения, которая является традиционным определением отношений между Республикой Армения и Российской Федерацией.

В статье структурно-функциональные характеристики 102-й военной базы РФ становятся предметом отдельного анализа, из чего делается вывод, что она представляет собой особое армейское объединенное подразделение с разнофункциональными приоритетами и может решать различные задачи военного характера.

В статье также рассматриваются и анализируются отдельные проблемные эпизоды армяно-российского стратегического сотрудничества, которые связаны с продажей РФ оружия Азербайджану или возможным поведением Россией в отношении безопасности Арцаха. Констатируется, что возникновение проблем в отношениях сотрудничества между сверхдержавами с одной стороны и государствами с небольшими ресурсами с другой, вызвано разным восприятием интересов а также различным восприятием друг друга в новых геополитических реалиях.

* * *

Ներածություն: ԽՍՀՄ կազմալուծումը հանգեցրեց միջազգային հարաբերությունների համակարգում էական փոփոխությունների: Երկրներ գլոբալ հավասարակշռությունը փոխվեց միաբնեռի, իսկ միջազգային նոր իրողությունների մեջ հայտնված բալթյան, հարավկովկասյան ու կենտրոն ասիական երկրները հայտվեցին, մի կողմից, աշխարհաքաղաքական ու անվտանգային ինքնության նոր փնտրտուքի, մյուս կողմից՝ նաև ԽՍՀՄ փլուզումով պայմանավորված լրջագույն խնդիրների՝ ի հայտ եկած էթնո-քաղաքական կոնֆլիկտների, ազգային իշխանությունների ձևավորվամբ, տնտեսական խնդիրների կարգավորման բարդագույն իրավիճակներում:

Նորանկախ պետություններում ազգայնականության աճը, ինքնորոշման շարժումները և միջէթնիկ թաքնված հակադրությունը խաղի նոր կանոններ պարտադրեցին երկրներին, և դա հատկապես տեսանելի եղավ Հվ. Կովկասում: Այս իրավիճակը պայմանավորեց նորանկախ պետությունների ինչպես ներպետական, այնպես էլ միջպետական օրակարգը: Որպես հետևանք

հարավկովկասյան նորանկախ երկրներում ձևավորվեցին նոր վերնախավեր. Վրաստանում ազգայնական Ջվիադ Գամսախուրդիան եկավ իշխանության, ՀՀ-ում՝ առավել ազատական հայացքների կրող Լ. Տեր-Պետրոսյանը, իսկ Ադրբեջանում՝ նախկին «պարտյական» Այազ Մուրադիբովը: Այս հիմնահարցերը հանդիսացել են մի շարք հետազոտողների՝ Դ. Բ. Մալիշևայի, Ա. Իսկանդարյանի, Վ. Վ. Ամելինի, Յ.Գ. Բարսեղովի, Ջ. Բալայանի ուսումնասիրության նյութ: Երեք երկրներում էլ նոր էլիտաների իշխանության գալը կապված էր ազգային հարցերի հետ, որոնք այդ երկրներից երկուսում վերածվել էին էթնոքաղաքական համակարտությունների [Վրաց-օսական ու վրաց-աբխազական և Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը]: ՀՀ-ում էթնոքաղաքական ներքին կոնֆլիկտ առկա չէր, սակայն ՀՀ-ն օժանդակում էր ԼՂԻՄ հայերի կյանքի իրավունքը պաշտպանելու շարժմանը, ապա ԽՍՀՄ օրենսդրության պայմաններում Ադրբեջանական ԽՍՀՄ-ից դուրս գալու ու ՀԽՍՀ-ին միանալու, իսկ հետագայում արդեն նաև անկախանալու իրավունքների իրացմանը:

Նման պայմաններում Հվ. Կովկասյան բոլոր երեք երկրներն էլ ունեին ինչպես անվտանգության վակուում, այնպես էլ արտաքին քաղաքական ուղեգծի ճշգրտման կենսական հարցեր: Չնայած ԽՍՀՄ-ի վերացմանը՝ նախկին կենտրոնի հետ շփումները դեռ երկար ժամանակ արդիական ու կարևոր էին նորանկախ երկրներում, և դրանք դեռ տևական ժամանակ շարունակեցին ազդեցություն ունենալ այդ երկրների արտաքին ու ներքին քաղաքական օրակարգերի վրա: Մյուս կողմից հենց նույն ՌԴ-ում ձևավորված անկայուն իրավիճակը, կապված էր քաղաքական անկայունության և Հս. Կովկասում կենտրոնախույս ուժերի անջատողականության աճի հետ, բարդ ու երբեմն էլ անվերահսկելի իրավիճակը էր ստեղծում նախկին կենտրոնի ծայրագավառներում: Նորանկախ պետությունները միաժամանակ ամեննին դեմ չէին ձևավորված ազդեցության վակուումը լրացնել միջազգային հարաբերությունների ամենատարբեր տարածաշրջանային ու գլոբալ դերակատարներով [ԱՄՆ, ԵՄ, Թուրքիա, Իրան Չինաստան և այլն], որոնք աստիճանաբար կարգավորում էին հարաբերությունները իրենց պոտենցիալ գործընկերների, ինչու չէ, դաշնակիցների հետ:

Այս համատեքստում է հատկապես կարևորվում պատմահամեմատական, կառուցվածքային-գործառական և համակարգային մեթոդաբանության դիրքերից նորանկախ և այդ շրջանում կայուն անկայունության մեջ գտնվող Հվ. Կովկասում ՀՀ արտաքին ու անվտանգության քաղաքականության առանց հանդիսացող հայ-ռուսական հարաբերությունների և դրանց կարևորագույն բաղադրիչ ՌԴ 102-րդ բազայի դերակատարման ուսումնասիրությունը: Կարևոր է փաստել, որ 102-րդ ռազմաբազան սովորական զինվորական ստորաբաժանում չէր, այլ համաբանակային խնդիրներ լուծելու ռազմատեխնիկական միավոր, որն ուներ ու շարունակում է ունենալ ռազմաքաղաքական կարևոր դերակատարում ողջ Հվ.Կովկասում ՌԴ շահերի ու ՀՀ անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների ձևավորման ու կայացման իրողությունները: Հարավկովկասյան երկրներից Ադրբեջանն ու Վրաստանը անկախացումից անմիջապես հետո հռչակեցին ՌԴ-ից աստիճանաբար հեռվանալու ռազմավարություն՝ առաջնահերթությունը տալով Մոսկվայի աշխարհաքաղաքական հակառակորդներին, որոնք սեփական շահերն ունեին նոր ձևավորված Հարավային Կովկասում: Վրաստանը ձգտում էր իր հարաբերությունները խորացնել Արևմուտքի ու ԵՄ-ի հետ՝ դա դիտարկելով որպես

քաղաքակրթական ու աշխարհաքաղաքական իր ընտրություն: Ադրբեջանը սեփական արտաքին քաղաքական գիծը կառուցեց մի քանի բաղադրիչների վրա՝ ռազմական շփումներ Թուրքիայի հետ, գործակցություն ՆԱՏՕ-ի հետ, ԵՄ-ի հետ ակտիվ շփումներ՝ հատուկ նշանակություն տալով ԱՄՆ-ի հետ փոխհարաբերություններին: Նշենք, որ Ադրբեջանի աշխարհաքաղաքական նշանակությունը պայմանավորված էր նրա տիրապետման տակ առկա էներգետիկ պաշարներով, իսկ Վրաստանի ռազմավարական դերակատարումը՝ վերջինիս հաղորդակցային կարգավիճակով, ընդգծված հակառուսականությամբ, ՌԴ հյուսիսկովկասյան տարածաշրջանի հետ աշխարհագրական կապով:

Ի տարբերություն Վրաստանի ու Ադրբեջանի՝ ՀՀ հարաբերությունները ՌԴ-ի հետ նոր՝ անկախ պետության կարգավիճակում ձևակերպվեցին ակտիվ գործակցության ու բարիդրացիության ներքո, որն իր մեջ ուներ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք բաղադրիչներ: Նորանկախ ՀՀ-ն, չնայած Արևմուտքի հետ ընդհանուր շփումների ձևաչափերի մասնակից էր, սակայն իր անվտանգության հիմքում դրեց ՌԴ-ի կողմից երկկողմ ու հետխորհրդային տարածքում անվտանգային և տնտեսական ինտեգրացիոն միավորումների ձևավորմանը իր մասնակցությունն ու անդամակցությունը, որը շփումների ակտիվության որոշակի փուլից հետո ձևակերպվեց որպես «ռազմավարական գործակցության և դաշնակցային» հարաբերություններ: Միջազգային իրավունքի ու քաղաքական իրողությունների տեսանկյունից այս ձևակերպումներն ունեն կոնկրետ բովանդակություն, կարևոր շեշտադրումներ և նշանակում են երկկողմ բացառիկ հարաբերությունների վիճակ ու առկայություն:

«Ռազմավարական գործընկերություն» հասկացությունը ընկալվում է որպես գործակցության հատուկ տեսակ, որի հիմքերը, ըստ ռեալիզմի տեսաբան Ադամ Ուոլֆերսի, երկուսն են. «Համագործակցությունը կարող է պետության մոտ ի հայտ գալ, որպեսզի նա կարողանա կարգավորել հարաբերությունները մի խումբ պետությունների խմբի մեջ: Այսինքն՝ շահը բացառապես ներքին ուղղվածություն է ունենալու: Մյուս հանգամանքը երկու պետությունների մոտիվացիան է՝ ուղղված ռեսուրսներն ու ջանքերը մեկտեղել արտաքին վտանգի դեմ: Այս պարագայում համագործակցությունը պայմանավորվում է այդ սպառնալիքի փաստով» [Wolfers, 1962, 59]: Հայ-ռուսական ռազմավարական գործակցության փաստն առաջին հերթին պայմանավորված էր ՀՀ-ի նկատմամբ արտաքին վտանգի առկայությամբ, որը լրամշակվում է տնտեսական, համայնքային, էներգետիկ գործակցային բաղադրիչներով: ՀՀ-ի համար որպես արտաքին սպառնալիք դիտարկվում էին Թուրքիայից բխող վտանգը և Ադրբեջանի հետ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» վիճակը: Միաժամանակ ՌԴ-ի համար արտաքին սպառնալիք էր և շարունակում է մնալ իր ազդեցության թուլացումը և մրցակից աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային ուժային կենտրոնների ակտիվությունը Հվ. Կովկասում:

Քաղաքական տեսաբանների կարծիքով «ռազմավարական գործընկերությունը» լավ պլանավորված գործողություն է՝ ուղղված երկարաժամկետ նպատակներին հասնելուն [Husar, Maihold, Mair, 2010, 21-42], որն առաջ է բերում հույս, ակնկալիքներ, որոնք, սակայն, խոչընդոտող ինչ-ինչ հանգամանքների պարագայում կարող են չարդարացվել: Մասնավորապես գերմանացի մտածող Գ. Մայխուլդի կարծիքով «գործընկերություն» բառը պարունակում է ենթադրություն

հավասար իրավունքների ու խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն կառուցողական դիրքերից քննարկելու կողմերի հարաբերությունների վերաբերյալ միացյալ որոշումները [Husar, Maihold, Mair, 2010, 149-156]: Սակայն միջազգային քաղաքական շփումների բոլոր դեպքերում չէ, որ այս մոտեցումը լիարժեք կիրառվում է, քանի որ այստեղ մեծ կարևորություն ունի, թե կողմերը ազդեցության ու փոխկախվածության ինչ բնույթ, տնտեսական ու ռազմաքաղաքական ինչ ազդեցություն ունեն: Այս մոտեցումը իրական քաղաքականության դիրքերից ոչ միշտ ու ոչ ամբողջ ծավալով է կիրառելի, եթե կողմերից մեկը ռազմավարական ազդեցության կրող պետություն է, մյուսը՝ փոքր ռեսուրսապահովվածությամբ երկիր, որն ունի թույլ դիմադրողականություն ու գոյաբանական խնդիրներ: Չնայած այս երկու երկրների շահերը ինչ-որ մի մակարդակում համընկնում են, սակայն ռազմավարական ազդեցության կրողի շահերի ընդգրկունությունը շատ ավելի մեծ է ու մասշտաբային, հետևաբար օբյեկտիվորեն նրանց միջև ռազմավարական գործակցությունը մասնակի է արդյունավետ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է արձանագրել, որ ռազմավարական գործընկերությունը փոխշահավետ համագործակցություն է երկու կամ ավել կողմերի միջև միջազգային հարթակներում, որն ունի երկարաժամկետ բնույթ, կողմերի ընդհանուր շահեր, պատկերացումներ: «Ռազմավարական գործընկերություն» բնորոշումը հաճախ է կիրառվում հայ ու ռուս պաշտոնյաների հրապարակային ձևակերպումներում և նշանակում է երկու երկրների հարաբերությունների որակ, գնահատական: Ակնհայտ է, որ այդ հասկացությունը բնորոշում է երկու երկրների որոշակի ժամանակահատվածի փոխհարաբերությունների մակարդակը և խորությունը, սակայն բացարձակ պարտադիր չէ, որ աշխարհաքաղաքական նոր կոնյուկտուրայի պայմաններում այն լինի կենսունակ ու նույնական ինչպես նախկինում է եղել: Փոփոխվող ուժային հավասարակշռության պայմաններում ռազմավարական գործընկերության հարաբերությունները կարող են փոխակերպվել, քանի որ նոր պայմաններում կողմերը կարող են շահերի ու սպառնալիքների վերաբերյալ ունենալ միմյանցից տարբերվող պատկերացումներ:

Վերադառնալով հայ-ռուսական հարաբերությունների թեմային՝ նշենք, որ ռազմաքաղաքական համագործակցությունը երկու՝ նախկին ԽՍՀՄ երկրների՝ ՌԴ-ի ու ՀՀ-ի միջև զարգացավ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ (ՀԱՊԿ) ձևաչափով, սակայն տարածաշրջանային անվտանգության ապահովման մեջ առանցքային դեր ու նշանակություն, այնուամենայնիվ, խաղաց հայ-ռուսական երկկողմ գործակցության ձևաչափը: Վերջինը, ներկայացնելով ՀՀ անվտանգության քաղաքականության առանցքը, որոշակի կանխատեսելի ուժային բալանս էր ապահովում Հվ. Կովկասում մինչև 2020 թ. սեպտեմբերյան պատերազմը:

102-րդ ռազմաբազան ու հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների համակարգը: Հայ-ռուսական ռազմավարական գործակցության առանցքային բաղադրիչը երկու երկրների միջև առկա ռազմաքաղաքական ու ռազմատեխնիկական համագործակցությունն ու դաշնակցային հարաբերություններն են, որոնց կարևորագույն բաղադրիչը ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազան է: Նրա կարգավիճակն ու գործունեությունը կանոնակարգվում է երկու երկրների նախագահների միջև Մոսկվայում 1995 թ. մարտի 16-ին կնքված «ՀՀ-ի տարածքում ՌԴ ռազմական բազայի մասին» պայմանագրով [МВД РФ, 1995], որը նորանկախ ՀՀ-ի համար ռազմական անվտանգության կարևոր օղակ էր, իսկ ՌԴ-ի համար՝ տարածաշրջանում ուժային հավասարակշռության ու սեփական քաղաքական ազդեցության կարևոր գործիք:

The Armenian-Russian Military-Political Cooperation System and the 102 nd Military Base of Russia
Հայ-ռուսական ռազմաքաղաքական գործակցության համակարգը եվ ՌԴ 102-րդ ռազմաբազան

ՌԴ 102-րդ ռազմական բազան ստեղծվել է ԽՍՀՄ ՋՌԻ-ի 7-րդ զարդիական բանակի 127 կարմիր բանակային մոտոհրաձգային դիվիզիայի հիմքով և ունի երկու՝ Երևանյան ու Գյումրու զարնիզոններ: Երևանյան զարնիզոնը ներառում է ՀՀ տարածքում ՌԴ ՋՌԻ կառավարման կենտրոնը, 123-րդ մոտոհրաձգային գունդը, 3624-րդ ավիացիոն բազան, հոսպիտալը, փոստային կայանը, զարնիզոնային դատարանը, Հետախուզական գլխավոր ծառայություն (ԳԲՄ), ՀՀԾ-ի ռադիոկենտրոնը: Գյումրիի զարնիզոնում են տեղակայված 128-րդ մոտոհրաձգային գունդը, 124-րդ մոտոհրաձգային գունդը, 988-րդ զենիթահրթիռային գունդը, 922-րդ հրետանային գունդը: 102-րդ ռազմաբազան ներառում է տանկային, հետախուզական, վերականգնողական կենտրոններ, ինժեներասակրավորական, նյութատնտեսական ապահովման բաժնայիններ, քիմիական, կենսաբանական ու ռադիացիոն պաշտպանության, հակատանկային դիվիզիոն, ռադիոէլեկտրոնային պայքարի, բուժական ու կոմենդանտային ստորաբաժանումներ, հոսպիտալ, ինժեներական զինպահեստները, բանկն ու ՀԳԾ(ԳԲՄ) բաժինը [МВД РФ]:

Ռազմաբազայի ստորաբաժանումները կառուցվածքային առումով մտնում են ՀՀ ՋՌԻ-ի հետ Միացյալ ռազմական խմբավորման մեջ և համաձայն 1992 թ. սեպտեմբերի 30-ի պայմանագրի՝ ապահովում են հայ-թուրքական 345 կմ ու հայ-իրական 45 կմ-ոց ձգվածությամբ սահմանների անվտանգությունը: Այն ներառում է ՀՀ-ում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ստորաբաժանումները, որոնք ընդգրկում են սահմանային 4 խմբեր տեղակայված Գյումրիում, Մեղրիում, Արմավիրում և Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում [Զվարթնոցի]՝ սահմանապահ ստորաբաժանումները 2024 թ. օգոստոսից դուրս են բերվել օդանավակայանի տարածքից]: Ըստ մամուլում առկա տեղեկատվության՝ ՌԴ 102-րդ ռազմաբազայի զորակազմի և սահմանապահ ստորաբաժանումների թվակազմը հասնում է 4.5 հազարի: Ռազմաբազայի նյութատեխնիկական սպասարկումն ու ապահովումն իրականացվում է հավասար հիմունքներով: Ռազմատեխնիկական առումով 102-րդ ռազմաբազայի տրամադրության տակ առկա են հարձակողական ու պաշտպանական տարաբնույթ միջոցներ [TACC 2015] (տե՛ս Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Զինատեսակ	Քանակ
Տանկ T-72	74 միավոր
Զրահամեքենա БТР	17 միավոր
Անձնակազմի զրահապատ մեքենա БМП-1/-2	129 միավոր
Հրետանային համակարգեր	84 միավոր
Կործանիչ ինքնաթիռներ МиГ-29	18 միավոր
ԶՀՀ С-300В,	2 մարտկոց
ԶՀՀ «Куб».	1 մարտկոց
ՀՕՊ համակարգեր С-300В	1 մարտկոց

ՌԴ 102-րդ ռազմաբազայի հիմնական խնդիրը ԱՊՀ/ՀԱՊԿ արտաքին սահմանների շուրջ ռազմավարական հավասարակշռություն ապահովումն է, որը, համաձայն Հավաքական անվտանգության պայմանագրի (ՀԱՊ) 1992 թ. մարտի 15-ի դրույթների, տեղավորվում էր ՌԴ շահերի ու ՀՀ անվտանգության առաջնահերթությունների միջակայքում:

Տարածաշրջանային իրողությունները և հայ-ռուսական շփումների նոր օրակարգերը: XXI դարակարգին հայ-ռուսական հարաբերությունները թևակոխեցին որակական նոր փուլ: Սա պայմանավորված էր մի շարք իրողություններով, մասնավորապես տարածաշրջանում նախ էականորեն ավելացավ Արևմուտքի ու Թուրքիայի ազդեցությունը՝ ի հաշիվ ՌԴ-ի, ապա Վրաստանում առաջ եկավ ռուսական ռազմաբազաները հանելու քաղաքական օրակարգ [Российская Газета, 2007], որը պայմանավորված էր ԵԱՀԿ-ի ստամբուլյան գագաթաժողովում ՌԴ-ի ստանձնած հանձնառություններով: Այս փուլում արդեն հստակորեն տեսանելի էին Վրաստանի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ նրա՝ հարաբերությունները խորացնելու հստակ մտադրությունը, ԱՄՆ-ի հետ ռազմավարական շփումների օրակարգը, ինչպես նաև ՌԴ ազդեցությունը նվազեցնելու գործնական քայլերը: Նման իրողությունները պատճառ հանդիսացան, որ ՌԴ-ն 2000 թվականը վերախմբագրի արտաքին քաղաքականության իր ռազմավարությունը՝ կենտրոնանալով ԱՊՀ տարածաշրջանի աշխարհաքաղաքական գործընթացների վրա՝ դա իրականացնելով երկկողմ ու բազմակողմ ձևաչափերով:

2000 թ. հոկտեմբերի 5-ին ՌԴ-ի ու ՀՀ-ի միջև ստորագրվեց «ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դաշնակցային փոխգործակցության» հռչակագիրը՝ ուղղված XXI դարի մարտահրավերներին միացյալ ուժերով հակադարձելուն [МИД РФ, 2000]: 2001 թ. հոկտեմբերի 3-ին 102-րդ ռազմաբազայում ՌԴ ու ՀՀ ՀՕՊ միջոցները, որոնք ներառում էին ՀՀ ՀՕՊ ուժերը, ՌԴ ավիացիոն խմբավորումը և ՌԴ ռազմական բազայի զենիթահրթիռային գունդը, անցան շուրջօրյա ռազմական հերթապահության: Սա որակապես նոր մակարդակի բարձրացրեց ՀՀ ռազմական անվտանգության ապահովումը: Ակնհայտ է՝ «ՀՀ-ի համար ՌԴ/ՀԱՊԿ-ի հետ գործակցության առաջնահերթ ոլորտը ՀՕՊ-ն էր, որը պայմանավորված էր Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրական վտանգի առկայության փաստով» [Минасян, 2005, 27]: Նշենք, որ ՀՀ-ում գործող ՀՕՊ-ը ինտեգրված էր ՌԴ հյուսիսկովկասյան ռազմական օկրուգի ՀՕՊ համակարգին:

2010 թ. Հվ.Կովկասը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում քաղաքական մի շարք կարևոր գործընթացների պատճառով: 2010 թ. օգոստոսի 20-ին ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևի՝ ՀՀ պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեց ՀՀ-ի ու ՌԴ-ի միջև ռուսական ռազմական բազայի՝ ՀՀ-ի տարածքում գտնվելու վերաբերյալ 1995 թ. մարտի 16-ի պայմանագրի 5-րդ արձանագրությունը, որի համաձայն՝ ռազմաբազայի գործունեության ժամկետը երկարաձգվեց մինչև 2044 թվականը [Президент РФ, 2015]: Համաձայն նշված արձանագրության 3 հոդվածում տեղի ունեցած խմբագրումների՝ ՌԴ-ն, բացի սեփական շահերը և ՀՀ անվտանգությունը ապահովելու գործառնությունը, նաև պարտավորություն էր ստանձնում «այդ նպատակներին հասնելու համար աջակցելու ՀՀ-ին ձեռք բերելու ժամանակակից ռազմական տեխնիկա» [Кавказский узел, 2015]: Տեքստում նշվում էր, որ պայմանագրի երկարացված ժամկետից հետո նրա ժամկետը ավտոմատ երկարացվում էր 5 տարով, եթե կողմերից որևէ մեկը

գրավոր տեսքով չի իրազեկել մյուսին պայմանագրի գործառնման ժամկետից առնվազն 6 ամիս առաջ պայմանագրի՝ իր մասնակցության դադարեցման մասին:

Նշենք, որ առհասարակ հայ-ռուսական հարաբերություններում զենքի ձեռքբերման թեման առանցքային կարևորության հարց է եղել ու շարունակում է այդպիսին մնալ: Այս հարցը ՀՀ-ի համար ունի նաև հավելյալ կարևորություն, քանի որ ՌԴ-ն, բացի ՀՀ-ից, զենք էր վաճառում նաև Ադրբեյջանին, իսկ հաշվի առնելով Բաքվի հոեոորաբանությունը՝ այն մտահոգիչ հանգամանք էր ՀՀ-ի համար. մյուս կողմից՝ առկա էր ՌԴ-ՀՀ ռազմավարական գործակցության ձևաչափը, որի ոգուն ու փիլիսոփայությանը այդ քայլը չէր համապատասխանում:

ՌԴ-ն, իր հերթին կողմերին զինտեխնիկա վաճառելով, գործնականում ռազմատեխնիկական վերահսկողություն էր փորձում ապահովել հակամարտության կողմերի վրա, որպեսզի նրանցից որևէ մեկը չփորձի պատերազմ վերսկսել, քանի որ լավ գիտակցում էր, որ պատերազմի պայմաններում կարող է խախտվել տարածաշրջանային ուժային հավասարակշռությունը և տարածաշրջանում իր դերակատարությունը: Նաև դա էր պատճառը, որ Մոսկվան ԼՂ հակամարտության ժամանակ համահեռավորվածության վրա էր, և չէր աջակցում խնդրի՝ որևէ կողմին, քանի որ իր համար թե՛ Երևանը, թե՛ Բաքուն ունեին միմյանցից տարբերվող, սակայն աշխարհաքաղաքական կարևոր նշանակություն:

ՌԴ-ի կողմից ՀՀ-ին ու Ադրբեյջանին զենքի վաճառքի բանաձևը բնորոշվում էր մի շարք հանգամանքներով. նախ՝ կապված էր կողմերի առաջնորդների հետ անձնական շփումների փաստով, երկրորդ՝ ուներ նաև առևտրային բաղադրիչը, որը ռուսական կողմին ապահովում էր ֆինանսական մեծածավալ հոսքեր: Աշխարհաքաղաքական իմաստով զենքի վաճառքը ռուսական ռազմաքաղաքական ազդեցության տարր էր (այս տարրը որոշակիորեն փոփոխվեց միայն այն ժամանակ, երբ Ադրբեյջանը սկսեց զենք ձեռք բերել Թուրքիայից, Իսրայելից, Արլ. Եվրոպայի մի շարք այլ երկրներից): Առևտրային բաղադրիչի մասով կար ընկալում, որով, երբ ՌԴ-ն ՀՀ-ին էր փոխանցում 200 մլն արժողությամբ որևէ զինտեխնիկայի խմբաքանակ, ապա նա դրանով իր համար Ադրբեյջանից 3 մլրդ դոլարի պատվեր էր ապահովում:

Առհասարակ զենքի վաճառքի ու կողմերին դրա փոխանցման թեման Արցախի շուրջ պատերազմների բոլոր փուլերում միշտ եղել է առանցքային ու նաև խնդրահարույց, քանի որ այդ տեղեկատվությունը սովորաբար փակ էր, իսկ տեղի ունեցած գործարքների մասին փորձագետների սովորաբար տեղեկանում էին ուշացումով: 1992 թ.՝ ԽՍՀՄ ռազմատեխնիկական գույքի բաշխումից հետո՝ ՀՀ-ն, նվազագույնը մինչև 1996 թ. կեսերը, ՌԴ-ից հավելյալ զինտեխնիկա ու զինամթերք ստացավ: Ըստ մամուլի՝ դրանք կա՛մ ԽՍՀՄ-ի գույքի ուշացած փոխանցումներն էին, կա՛մ, որ առավել իրատեսական ու ճշմարտացի էր, ՌԴ-ից ՀՀ-ին փոխանցված հավելյալ միջոցներ: Այս հարցի վերաբերյալ ՌԴ Պետական պուրմայի պաշտպանության հանձնաժողովի ղեկավար Լ. Ռոխլինը 1997 թ. ապրիլին հայտարարեց, որ ՀՀ-ին փոխանցված գործարքի գինը եղել է մեկ միլիարդ դոլար, և դրա հիմքով ՌԴ-ում հետաքննություն է սկսվել: Սակայն, ինչպես հետագայում պարզվեց, ՌԴ նախագահի և վարչապետի մակարդակով նման հրամանի ստորագրում տեղի չի ունեցել, մինչդեռ ՌԴ ՊՆ մակարդակում հաստատվեց գործարքի փաստը [«Коммерсантъ», 1997]: Մասնավորապես՝ հայկական կողմին էր փոխանցվել (տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Տեսակ	Քանակ/միավոր
Տանկ T-72	80 միավոր
ՀՄՄ БМП-2	-
Ռեակտիվ ու հրանոթային հրետանի	120 միավոր
ՇՉՀՀ	-
Ինքնաձիգներ	10 հազար միավոր
Հրետանային արկեր	1.5 մլն միավոր
ՀՄՄ-2 համար նախատեսված արկ	1.5 մլն միավոր
Հակատանկային միջոցների արկեր/փամփուշտներ	1000 միավոր
Նոնակ	350 հազար միավոր
Ինքնաձիգի փամփուշտ	227 մլն միավոր

Չենքը վաճառքի և հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունների վերաբերյալ ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի հետ անցկացված հարցազրույցում վերջինս նշում է, որ. «ռազմատեխնիկական հարաբերությունները սերտագույն էին, և ՀՀ-ին հաջողվում էր ձեռք բերել այդ ժամանակի համար արդիական ու ՀՀ-ին անհրաժեշտ տեխնիկա: Մի կողմից՝ դա երկրների ղեկավարների անձնական հարաբերությունների, մյուս կողմից՝ երկու երկրների միջև առկա դիվանագիտական ու ռազմավարական ընդհանուր պատկերացումների արդյունք էր: Մեծ աշխատանք էր տարվում, որ պատվիրված ու համաձայնեցված տեխնիկական տրամադրման ժամկետների հետ կապված մեծ շեղումներ չունենային, հետևաբար անգամ դաշնակից երկրի կառավարման համակարգի բոլոր մակարդակների հետ հայկական կողմը ինտենսիվ աշխատում էր» [Քոչարյան, 2023]:

ՀՀ ու ՌԴ ռազմատեխնիկական համագործակցության հետագա մյուս դրվագները ունենին արդեն առավել կոնկրետ, հասցեական դրսևորումներ, որը կապված էր նաև ՀՀ-ում առկա ֆինանսական բարդ իրողությունների հետ: Արդյունքում ՌԴ-ն ՀՀ-ի հետ իր շփումներում սկսեց վճարման նոր համակարգ գործարկել՝ հաշվի առնելով երկու երկրների հարաբերությունների դաշնակցային բնույթը: 2015 թ. ՌԴ-ն ՀՀ-ին տրամադրեց 200 մլն դոլարի միջպետական վարկ, որի շրջանակում Երևանը ձեռք բերեց ՀԿՀՀ «СМЕРЧ» համակարգեր՝ իրենց ռազմամթերքով, ՇՉՀՀ «Верба» և «Игла-С», ТОС-1А «Солнцепек» համակարգեր, հակատանկային «Конкурс-М» և «Корнет-Э» միջոցներ, զրահամեքենա «Тигр», ռադիոհետախուզական պայքարի «Автобаза-М» միջոցներ, կապի համակարգեր և այլն [Ивестия, 2018]: Հետագայում՝ արդեն 2016 թ., ՀՀ-ին զինտեխնիկայի փոխանցումները շարունակվեցին, որի արդյունքում ՀՀ-ն ստացավ օպերատիվ մարտավարական «Искандер-Э» (2016՝ 300 մլն դոլար), ՉՀՀ «Бук-М1-2» և այլ համակարգեր: ՌԴ-ից ՀՀ-ի՝ զենք ձեռք բերելու նպատակով միջպետական նոր վարկ ձևակերպվեց 2017 թ. հոկտեմբերին, որով նախատեսված տեխնիկայի փոխանցումը հայկական կողմին պետք է տեղի ունենար 2018-2022 թթ.: ՀՀ-ն այս զինտեխնիկայի համար վճարում էր ընդամենը 10 % կանխավճար, իսկ մյուս մասը լրացվում էր միջպետական վարկի միջոցներով: Այս գործարքի արդյունքում ՀՀ-ն ՌԴ-ից ձեռք բերեց 4 միավոր Су-30СМ ինքնաթիռ: Ինքնաթիռները ՀՀ-ն ձեռք բերեց ՌԴ ներքին գներով՝ հիմք ընդունելով ՀՀ-ի ՀԱՊԿ անդամ լինելու փաստը [«Коммерсантъ,» 2019]:

The Armenian-Russian Military-Political Cooperation System and the 102 nd Military Base of Russia
Հայ-ռուսական ռազմաքաղաքական գործակցության համակարգը եվ ՌԴ 102-րդ ռազմաբազան

Ինչպես արդեն նշեցինք, բացի ՀՀ-ից՝ ՌԴ-ից զինտեխնիկա գնում էր նաև Ադրբեջանը ու անհամեմատ մեծ քանակությամբ: Դա, մի կողմից, կապված էր Ադրբեջանի ռազմական բյուջեի՝ ՀՀ ռազմական բյուջեի ծավալները գերակշռող հանգամանքով, մյուս կողմից՝ այն իրողությամբ, որ Ի. Ալիևը ԼՂ-ի լուծման իր մտեցումներում ռազմական լուծումը երբեք օրակարգից դուրս չէր հանում: Մյուս հարցը այն էր, որ ռուսական զենքն արևմտյանի համեմատ առավել էժան ու հասանելի էր Ադրբեջանի համար: 2003 թ. ՌԴ-ի ու Ադրբեջանի միջև կնքվեց ռազմատեխնիկական համագործակցության համաձայնագիր, իսկ 2010-2013 թթ. Ադրբեջանը ՌԴ-ին մեծ ծավալի զինտեխնիկա ձեռք բերելու պատվեր տվեց [Макиенко, 2018, 177-182] (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Զինտեխնիկայի տեսակ	Քանակ
Տանկ - Т-72Б և 100 Т-90С	62 և 100
ՀՄՄ - БМП-3, БТР-82А, БТР-80А	400
Ռեակտիվ և փողային հրետանի - 2С19 «Мста-С», 2С31 «Вена», РС30 9К58 «Смерч»,	300
Հակատանկային համակարգեր - «Корнет-Э»	100
Հակատանկային ծանր հրթիռային համակարգեր - «Хризантема-С»	2 դիվիզիոն
Ռեակտիվ կրակի համակարգ - ТОС-1А «Солнцепек»	24
ՀՕՊ համակարգեր - С-300ПМУ-2 «Фаворит»,	2 դիվիզիոն
ԶՀՀ - «Тор-М2Э»,	2 մարտկոց
ՇԶՀՀ - 9К338 «Игла-С»	300
Ուղղաթիռներ - Ми-35М և Ми-17	24 և 77
Ինքնաձիգ - АК-74М	120 հազար

Ռազմատեխնիկական ուժային նման իրողությունները բավական բարդ իրավիճակ էին ստեղծում տարածաշրջանում, և ՀՀ-ն իր անվտանգության պլանավորման մեջ այս առումով առանձնահատուկ կարևորություն էր տալիս ՌԴ 102-րդ ռազմաբազային, ՌԴ-ի դաշնակցային պարտավորությունների իրագործմանը: Ի դեպ, նշենք, որ ՀՀ-ի անվտանգության ապահովման՝ ՌԴ-ի կողմից տրվող երաշխիքները տարածվում էին բացառապես ՀՀ-ի՝ միջազգային ճանաչված սահմանների վրա, որոնք չէին ներառում ԼՂՀ-ն և նրա շուրջ ազատագրված 7 շրջանները: Զուգահեռաբար հիշեցնենք, որ մինչև 2018 թվականը ՀՀ-ն իրեն հոչակում էր որպես ոչ թե հակամարտության կողմ, այլ որպես ԼՂՀ անվտանգության երաշխավոր՝ հաշվի առնելով այնտեղ բնակվող էթնիկ հայ ազգաբնակչությանը Ադրբեջանից սպառնացող գոյութենական վտանգները և ԼՂՀ-ի՝ դիմադրության ռեսուրսի սակավությունը: Իրեն հոչակելով ԼՂՀ-ի անվտանգության երաշխավոր՝ ենթադրելի էր, որ ՀՀ-ն ԼՂՀ-ի դեմ ռազմական գործողությունների վերսկսման

դեպքում իր վրա հանձնառություն էր վերցնում ներգրավվելու ռազմական գործողություններում: Սակայն այս իրավիճակում հիմնական հարց այն էր, թե պաշտոնական Երևանը իրեն ԼՂՀ-ին աջակցողի՞, թե՞ ռազմական գործողություններին լիարժեք մասնակցի կարգավիճակում էր տեսնում: Որպես աջակցող կողմ՝ ՀՀ-ն լիովին ու ամբողջապես ներգրավված էր ԼՂՀ անվտանգության ապահովման մեջ. դիցուք ՀՀ ՊԲ-ի մի զգալի մասը ՀՀ ժամկետային և պայմանագրային զինծառայողներ էին:

Եթե ՀՀ-ն ԼՂՀ-ի անվտանգության ապահովման նպատակով դառնում էր ռազմական գործողությունների անմիջական կողմ և ռազմական գործողությունները տեղափոխվում էին հայ-ադրբեջանական առկա սահմանային շփման գիծ, ապա իրավիճակը ստանում էր որակապես այլ բնույթ. ռազմական բախման մեջ պետք է ներգրավվեին նաև այլ կողմեր՝ ՌԴ, Թուրքիա՝ հիմք ընդունելով ՀՀ-ի ու Ադրբեջանի հետ այդ երկրների ռազմավարական ու դաշնակցային՝ իրավականորեն պարտավորեցնող փաստաթղթերը: Այս պարագայում կարելի է հիշել ՌԴ կոշտ դիրքորոշումը 2018 թ. օգոստոսին Տավուշում տեղի ունեցած հայ-ադրբեջանական սահմանային էսկալացիայի մասին, երբ շատ սուր գնահատականներ հնչեցվեցին իրավիճակի վերաբերյալ, այդ թվում՝ ուղղված հայկական կողմին [Rusarmino, 2020]: Հենց նման իրավիճակում չհայտնվելու համար էր ՌԴ-ն փորձում էր ապահովել տարածաշրջանում ուժային այնպիսի բալանս, որը կլիներ իր կողմից հնարավորինս կառավարելի, քանի որ դրա խախտումը նրան ստիպելու էր ընտրություն կատարել ՀՀ-ի ու Ադրբեջանի միջև: Որևէ կողմի ընտրությունը պայմաններ կստեղծեր, որ Հվ. Կովկասում ավելանար ՌԴ-ին մրցակից շահեր ունեցողներ պետությունների թիվը՝ դրանով խախտելով ուժային ձևավորված հավասարակշռության վիճակը: Մեծ հաշվով այն, ինչ տեղի ունեցավ 2020 թ. պատերազմի արդյունքում, տարածաշրջանային ուժային հավասարակշռության խախտում էր, որտեղ ՌԴ դերը Հվ. Կովկասում փոփոխվեց: Նման արդյունքի հանգեցրին այդ ժամանակահատվածում տեղ գտած երկու կարևոր իրադարձություններ. առաջինը՝ ՀՀ-ում իշխանափոխությունը 2018 թ. և երկրորդը՝ 2022 թ. փետրվարի 22-ին ՌԴ-ի կողմից Ուկրաինայում նախաձեռնած ռազմական հատուկ գործողությունը, որը վերաճեց ՌԴ-ի և Արևմուտքի մոտ 55 պետության դեմ զլոբալ առձակատման:

Վերադառնալով հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների դիտարկմանը՝ նշենք, որ այդ հարաբերությունների խորացմանը զուգահեռ տարածաշրջանում տեղի էին ունենում ուժային այլ բևեռների հարաբերությունների սերտացման ու նոր որակական փուլ անցնելու գործընթացներ. մասնավորապես՝ հայ-ռուսական 2010 թ. արձանագրության ստորագրումից 4 օր առաջ՝ օգոստոսի 16-ին, ստորագրվեց «Ադրբեջանի և Թուրքական հանրապետության միջև ռազմավարական գործընկերության և փոխօգնության» պայմանագիրը [Президент Азербайджана, 2015]: Կողմերը պարտավորում էին միմյանց տրամադրել բազմակողմ օգնություն, այդ թվում՝ ռազմական օգնություն երրորդ կողմի հնարավոր ագրեսիայի պայմաններում: Պայմանագրում կետեր էին առկա, որ կանոնակարգում էին ռազմատեխնիկական ուղորտում ակտիվ գործակցության միացյալ քայլերը, հարցերը սահմանների անվտանգության ապահովման և տարածքային ամբողջականության ապահովման ոլորտներում:

Զուգահեռաբար նշեք, որ Ադրբեջանը Թուրքիայից գատ, ակտիվ գործակցում էր նաև ՌԴ-ի հետ՝ երկկողմ շփումները բնորոշելով որպես «ռազմավարական գործընկերային» [Президент РФ, 2015], բացի դա՝ Մոսկվայի հետ ուներ մեկ տասնյակից ավել համագործակցային փաստաթղթերի

փաթեթներ: Սա, իհարկե, անհանգստության աղբյուր էր ՀՀ-ի համար, սակայն անգամ ռազմավարական գործընկերային շփումների իրավական և փաստացի առկայության պայմաններում ՀՀ-ն հարցին մոտենում էր իրատեսականության դիրքերից՝ հասկանալով, որ ՌԴ-ի նման ազդեցություն ու ներուժ ունեցող պետության շահերը շատ ավելի լայն ու խորն են, քան հայ-ռուսական հարաբերությունների շրջանակը: Հետևաբար պետք է աշխարհաքաղաքական իմաստով իրատես լինել և այնպես դիրքավորվել, որ իրական շփումներում ձեռքբերումները իրողություն դառնան և ոչ թե հայցել ֆորմալ, դեկլարատիվ բնորոշումներ և դառնալ դրանց պատանդը: Մյուս կողմից՝ այստեղ առերեսվում ենք իրավիճակի հետ, երբ քաղաքական գործիչները «ռազմավարական գործընկերություն» հասկացության տակ ենթադրում և նկատի են ունենում հարաբերությունների խորության տարբեր աստիճաններ: Եզրույթի կիրառումը ՀՀ-ի պարագայում ՌԴ-ի կողմից առաջին հերթին նկատի է առնում ռազմաքաղաքական գործընկերությունը, Ադրբեջանի դեպքում շեշտադրումն առաջին հերթին արվում էր էներգետիկայի և տնտեսության ոլորտում գործակցության վրա:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՌԴ-ում ավանդաբար եղել է կարծիք, որ Երևանն առավել շահագրգիռ է իր տարածքում ռուսական ռազմական ներկայությամբ, քան Մոսկվան: Սակայն նշենք նաև, որ տարածաշրջանում ռուսական միակ ռազմաբազան պակաս կարևոր չէր նաև ՌԴ-ի համար. այն պարագայում, եթե ՀՀ-ն պահանջում է ՌԴ-ի զորքերի դուրսբերում իր տարածքից, ապա ՌԴ-ն կորցնում է իր ռազմատեխնիկական ներկայությունը ողջ տարածաշրջանում, հետևաբար նաև Հվ. Կովկասում իր ազդեցության կարևորագույն գործիքը, որը կարող էր անդրադառնալ Թուրքիայի ու Իրանի հետ Մոսկվայի շփումների վրա: Այդ պայմաններում ձևավորված վակուումը, եթե շարունակվի ՀՀ-ի նկատմամբ Անկարայից բխող սպառնալիքը, կարող է լցվել այլ պետության ռազմական ներկայությամբ: Միաժամանակ այն գաղափարը, որ 102-րդ ռազմաբազան այն հիմնական գործոնն է, որը զսպում էր Ադրբեջանին հնարավոր հարձակումից ԼՂՀ-ի վրա, իրականում չէր համապատասխանում իրականությանը, քանի որ ՌԴ-ն երբեք իր վրա հանձնառություն չէր վերցրել, որ ԼՂՀ-ի շուրջ ռազմական գործողությունների պարագայում կպաշտպանի ԼՂՀ-ին:

Եզրակացություններ: 2020 թ. «44 օրյա» պատերազմը հիմնովին նոր իրավիճակ ստեղծեց Հվ. Կովկասում: Ներտարածաշրջանային հանրապետությունների, տարածաշրջանային առաջատար երկրների ու գերտերությունների շահերի նոր որակի մրցակցությունը, որը մեկնարկեց Արցախի շուրջ ստատուս քվոյի փոփոխությամբ, խախտեց մինչ այդ տարածաշրջանի մասով առկա գրեթե բոլոր պայմանավորվածությունները, դիրքավորումները, կարմիր գծերը, հավասարակշռությունը: Այն պայմաններ ստեղծեց, որ Հվ. Կովկասի երկրները վերախմբագրեն իրենց արտաքին քաղաքական ուղեգծերը՝ փորձելով աշխարհի իրենց ընկալումներին համապատասխան նոր աշխարհաքաղաքական դերակատարում ձեռք բերեն, անվտանգության նոր երաշխիքներ ունենան, նոր գործընկերների հետ առավել խորը հարաբերվեն:

ՀՀ-ն այս պայմաններում թերևս ամենից ոչ միանշանակ կարգավիճակում հայտնված տարածաշրջանային երկիրն էր՝ ի տարբերություն Ադրբեջանի, որն իր՝ 2020 թ. պատերազմից հետո ավելացած դերակատարման աճը աշխարհաքաղաքական կապիտալիզացիայի է

ենթարկում՝ արտաքին քաղաքական իր օրակարգի մաս դարձնելով «Արևմտյան Ադրբեջան» ծրագիրը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ ՀՀ-ի նկատմամբ նրա հավակնոտ քաղաքականության շարունակականություն:

Այս պայմաններում անգամ, երբ տարածաշրջանում աշխարհաքաղաքական նման ընդգրկուն փոփոխություններ են տեղի ունենում, հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը, չնայած առանձին փոխադարձ քննադատողական երկկողմանի դրսևորումներին ու հայտարարություններին, շարունակեց մնալ ՀՀ անվտանգության ապահովման միակ գործուն ձևաչափը, իսկ 102-րդ ռազմաբազան՝ դրա միակ գործուն մեխանիզմը: Նոր իրավիճակում ինչպես Մոսկվայում, այնպես էլ Երևանում առնվազն կա ընկալում, որ առկա խնդիրների ու փոխադարձ ընկալումների մասով անկեղծ, իրատեսական ու բաց քննարկում վարելու անհրաժեշտություն կա: Այս պարագայում, սակայն, հատկապես կարևոր է, որ այդ քննարկման մեջ տարածաշրջանում այլ՝ մրցակցային շահեր ունեցող ուժային բևեռները ու սուբյեկտները ոչ կառուցողական ազդեցություն չունենան գործընթացների բնականոն հունների վրա, քանի որ դա ուղղակիորեն առնչվում է ՀՀ-ի անվտանգության ապահովմանը:

Գրականության ցանկ

Քնչարյան. 2023, Հարցազրույց ՀՀ 2-րդ նախագահ Ռ. Քնչարյանի հետ, 19.05.2023, Երևան:

Известия. 2018, В кредит и за наличные: Какое Россия поставляет оружие в Армению и в Азербайджан, Константин Богданов 30 марта 2018, 00:01, <https://iz.ru/726079/konstantin-bogdanov/v-kredit-i-za-nalichnye>

Кавказский узел. 2015, Договор между Российской Федерацией и Республикой Армения о российской военной базе на территории Республики Армения // Кавказский узел. <http://www.kavkaz-uzel.ru/articles/173310/> (дата обращения: 07.04.2015).

Коммерсантъ. 2019, Россия продала Армении истребители как себе. Четыре Су-30СМ ушли покупателю по внутрироссийским ценам, 31.01.2019. <https://www.kommersant.ru/doc/3868951>

Макиенко. 2018, Макиенко К. В., В ожидании бури: Южный Кавказ. Центр анализа стратегий и технологии, М, 2018, с. 177-182.

МИД РФ. 1995, Договор о российской военной базе на территории Армении https://www.mid.ru/ru/foreign_policy/international_contracts/international_contracts/2_contract/47983/

МИД РФ. 2000, ДЕКЛАРАЦИЯ О СОЮЗНИЧЕСКОМ ВЗАИМОДЕЙСТВИИ МЕЖДУ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ И РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ, ОРИЕНТИРОВАННОМ В XXI ВЕК, 05.10.2000, 05:34 <https://mid.ru/ru/detail-material-page/1682171/>

Минасян С. 2005, Минасян В контексте проблем региональной безопасности // Военнопромышленный курьер. № 20(87), с. 27.

Президент Азербайджана. 2015, Состоялась церемония подписания Азербайджано-Турецких документов // Президент Азербайджана. Официальный сайт. <http://ru.president.az/articles/603> (дата обращения: 08.04.2015).

Президент РФ. 2015, Документы, подписанные по итогам российско-армянских переговоров // Президент России. Официальный сайт. <http://news.kremlin.ru/ref notes/682> (дата обращения: 03.04.2015)

Российская Газета. 2007, 2006թ-ին Վրաստանից դուրս բերված ՌԴ-ի ռազմաբազաների (Գուդաուտա և Ախալքալաք) ռազմական տեխնիկայի մի մասը տեղափոխվեց Գյումրիի 102-րդ ՌԴ ռազմաբազա: Последний воинский эшелон из Грузии проследовал в Гюмри, 16.11.2007, 11:30 <https://rg.ru/2007/11/16/eshelon-gruziya-anons.html>

ТАСС. 2015, Военно-техническое сотрудничество между Россией и Арменией: Досье // Информационное агентство России ТАСС. [Электронный ресурс] URL: <http://itar-tass.com/info/803760> (дата обращения: 04.02.2015).

102-ая ОРДЕНА АЛЕКСАНДРА НЕВСКОГО РОССИЙСКАЯ ВОЕННАЯ БАЗА, ИСТОРИЧЕСКАЯ СПРАВКА,

https://gyumri.mid.ru/ru/sootechestvenniki/102_aya_rossiyskaya_voennaya_baza/#:~:text=102-я%20ордена%20Александра%20Невского,полка%20435-й%20стрелковой%20дивизии.

Husar J., Maihold G., Mair S. 2010, The EU as a Would-Be Global Actor: Strategic Partnerships and Interregional Relations // Europe and New Leading Powers: Towards Partnership in Strategic Policy Areas, Baden-Baden: Nomos, pp. 21–42, p.149–156.

Rusarminfo. 2020, «К конфликту привел целый комплекс причин. В основе, разумеется, нерешенность карабахской проблемы. Плюс исключительная перегретость публичного пространства по обе стороны границы. Своего рода спусковым крючком послужил и географический фактор: решение армянской стороны реанимировать старый приграничный КПП, расположенный в 15 км от экспортных азербайджанских трубопроводов, вызвало повышенное беспокойство одних, неоправданную ответную реакцию других и в итоге запустило маховик противостояния с самыми непредсказуемыми последствиями», - сказал Сергей Лавров. <https://rusarminfo.ru/2020/08/21/lavrov-nazval-prichiny-iyulskogo-konflikta-azerbajdzhana-s-armeniej/>

Wolfers A. 1962, Discord and Collaboration: Essay of International Politics. Baltimore: The Johns Hopkins Press, pp. 59.